

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1947 ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ ԹԻՒ 9-10

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ. - Մեր վերջին կորուստները և ապագայի յոյսերը . . . 197

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ. - Գրեգոր Անաւարդեցին, Հայրապետ և գրէչ . . . 201

ՅԱՐ. ԳԻՒՐՏԵԱՆ. - Դարձեալ Թորոս Տարօնեցին 212

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ. - Երկու ճշտում . . . 222

Մ. ԵՐԵՅԵԱՆ. - Հինն ու նորն (ճշտումներ) . . . 223

ՏՈՔՏ. Յ. ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ. - Կոռնիկոսի ամբոյնները 224

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՃԱՔՏ. Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ. - Հայկական ճարտարապետութեան մէջ ներդաշնակութեան կանոններու պրպտումի փորձեր. Մասն Բ. . . 227

ՅՈՎՍԷՓ ԱՇՐԱՅԵԱՆ. - Համայնապատկեր շարժանկարի պատմութեան . . . 240

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ. - Էտկար Շահին (եր մահուան առթիւ) . . . 245

Հ. Յ. Բ. - Եզրագտաձայ նկարիչներու ցուցահանդէսը 247

Հ. ԳՐ. Ս. - Արտաշէս Գարիպեան, պատկաւոր Միւլանու Գեղարուեստից ակադեմիայէն . . . 252

ՊԱՏՄԱԿԱՆ

ՏՈՔՏ. ՖԵԼԻՔՍ ԱՒԵՏԻՔ. - Հայերը Հունգարիոյ մէջ 235

ՀԱՅԿԱԿԱՆ, ԱՐՁԱԳԱՆԳ

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ. - «Բազմավեպ»-ի հարիւրամեայ յորելինական հանդէսները . . . 253

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԽՄԲ. - Մեր գրական հունձքը . . . 260

SOMMAIRE

1947 Septembre - Octobre N. 9-10

PAGE

ARTICLE DE FOND

P. Mesrob Djanachian. - Nos dernières pertes et nos espérances de l'avenir . . . 197

PHILOLOGIE

P. Grégoire Sarkissian. - Grégoire d'Anazarba, Patriarche et écrivain . . . 201

H. Kurdian. - Encore sur «Thoros de Taron» 212

Haïg Berbérian. - Deux corrections . . . 222

M. Yéretzian. - Des choses vieilles et nouvelles . . . 223

Dr. H. Der-Ghazarian. - Les forteresses de Ghorigos. 224

BEAUX-ARTS

Ing. S. Djévahir. - Essai de recherche sur les règles de l'harmonie dans l'architecture arménienne (II partie) . . . 227

J. Achrafian. - Panorama de l'histoire du Cinéma 240

P. Mesrob Djanachian. - Edgar Chahine (à l'occasion de sa mort) 245

P. H. P. - L'exposition, en Egypte, des peintures arméniennes 247

P. G. S. - Ardachès Garibian, diplômé par l'Académie de Bréra (à Milan). 252

HISTOIRE

Dr. Félix Avédik. - Les arméniens en Hongrie 235

ECHO ARMÉNIEN

P. Nersès Der-Nersessian. - Les fêtes centennaires de la Revue «Pazmaveb» . . . 253

RECENSIONS

Réd. - Notre moisson littéraire 260

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1947
105-րդ ՏԱՐԻ



ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ
ԹԻՒ 9-10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՒ ԱՊԱԳԱՅԻ ՅՈՅՍԵՐԸ


Գրականութեան և գեղարուեստի սիրահար մեր ժողովուրդը այս տարի մին միշտին ետեւէն կորսնցոյց իր տաղանդաւոր գաւազներէն Ս. Խա. չառուշեան, Է. Շահին, Կ. Արա. մեան նկարիչները. անոնցմէ վերջ որպէս քաղաքական անձնաւորութիւններ Համո Օհանջանեան, Ն. Աղբաշեան (անոռանի միանգամայն որպէս մատենագիր և գրական քննադատ) և այս տարուան վերջին կորուստ մ'ալ Ստ. Մալխասեան՝ լեզուագետ ակադեմիկներ:

Երկրորդ միջազգային աղետաւոր պատերազմի ընթացքին կորսնցոյցած էինք արդէն բանաստեղծ Վահան Թեքեանը, Վ. Թարուշը, բանասեր Ն. Աղոնցը և Ա. Սարոյանը:

Պատերազմական զենքերու և բռն-

նապետութեանց զոհ տուինք այդ տարիներուն երեք երիտասարդ գրողներ եւս՝ Ա. Սեւա, Միսաք Մանուշեան, Տիկին Լաւ, որոնք տակաւին անաւարտ բողոս իրենց ստեղծագործական աշխատանքը, իրենց եռանդուն բարին մէջ յանկարծ բաւազգոր ինկան անմարդկային աղետին հրդեհումին տակ:

Հայ մամուլը անդրադարձաւ գաւազան աւիրներով այդ բոլորին վերայ, անոնց արժեքին և կամ կատարած դերին պատկերացումով, նշանք մեր ժողովուրդը գիտակից է գնահատելու մէջ ինչ որ կը կատարուի՝ գրի, արուեստի ասպարեզին վրայ Հայ մշակոյթի զարգացման և հայ անունին փառաւորութեան համար: «Բազմավեպ» որ իր բարձր դիտարա-



նեն կը դիտէ այդ ամէնը, կը բերէ իր խոր ցաւակցութիւնը, բայց տանկերով իր հայեացքը դէպի շուսաշուր և խոտ-տոռնակից հորիզոնները, մխիթարու-թեան շունչ մ'ալ կ'ոզէ աշեցներ կո-րոշտին ընկձող զգացումին վրայ:

Մեր ներկայ երիտասարդ սերուն-դը, գրասական ապագայի յաջողու-թիւններու, կը մղէ տեղագին աշխա-տանք Մայր Հայրենիքի սահմաննե-րէն ներս և Սփիւռքի զանազան կե-դրոններու մէջ. քեզ ցրուած կազմա-կերպական ուժեր են առոնք, բայց կը զգացուի անոնց վրայ համաձոյ կամքի մը գործընթացը արտադրելու, նորոգելու և նորոգուելու:

Մեր գրական կենտոնակոչութիւնը կարծես մրցանքի է եղած երոպա-կան նոյնիսկ ամէնէն մեծ ու մշակու-թային գետնի վրայ յառաջդիմ ազ-գերու հետ. այս մրցանքը անշուշտ մեր կարելիութիւններու և բոշի սահ-մանին մէջ նկատուած՝ իր յարաբե-րականութեամբ ալ աշխի աշքի գար-նող ցայտուն իրականութիւն մը կը դառնայ, հիացում պատճառելով ա-մէն անաչառ ու անկողմնակալ քննա-դատին: Մեր գաղութները Զրանտայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Լիբանանու Սիւրիոյ, Պոլսոյ՝ տաք կեանքի մը յայտնի նշանները տոշին, մխիթա-րական ամէն երեւոյթի տակ՝ պատե-րազմին յաջորդող շրջանին, երբ հո-րէն ու սուրբն ազատուած մարդկու-թիւնը կը բանար աչքերը խաղաղու-թեան և ազատութեան ոսկեղան տե-լերով դէպի երջանիկ հորիզոնները կեանքի:

Նոր շարժում ու նոր ծրագիր եկաւ գրաւելու տեղը՝ մեռած ու տկարացած գաղափարներուն. նոր քերթեր իջան հրապարակ մեր յրագրութեան կեան-քին մէջ. **Նախը, Սեւան, Դէպի Եր-կիր, Սկոս, Անի, Անիւ, Արարատ, Յուսաբեր, Armenian Quarterly, Կեանք և Գիր՝** գրականութեան և արուես-տի նշիրոշում. յետոյ ուրիշ ամա-քերթեր՝ **Երուսաղէմ, Գրաբեր, Աւե-տագիր, Երիտասարդ Հայուհի, Հայ Կին, Վերելք**, և այլն. լծուեցան գոր-ծունէութեան նոր եռանդով և բեղու-նութեամբ: Գրական քերթերէ դուրս նաեւ շարքաքերթեր ու օրագրեր նոյնպէս յայտնուեցան միեւնոյն խան-դավառութեամբ. **Մասիս, Ազատ Օր, Արեւելք, Արեւմուտք, Ժողովուրդ, Հայաստանեան ճակատ, Հայաստանի ճայն, Ճառագայթ, Շերակ, ՆՐ Կեանք, Արմենիա**, բոլորն ալ ազգա-սիրութեամբ տոչորուն՝ քեզ տարբեր գաղափարախօսութեան հետեւելով:

Դարաշուր «Բագմավիպ»ը կը մաղ-թէ այդ ամէնուն յարատեւութիւն և երկար կեանքի նպատակ հայ մշակոյթի, հայ լեզուի և հայ գրականութեան. Ուրախութեամբ դիտեցինք այն մեծ ոգեւորութիւնը որով այդ նոր հան-դէսները ու օրագրերը, ինչպէս նաեւ հիւները, ի շուր «Բագմավիպ»ի հա-րիւրամեակի տօնախմբութեան՝ եկան բոլորուեցան նահապետին շուրջ, ու արտայայտեցին ամէնէն տաք զգա-ցումները և ամէնէն բեղուն մտքերը՝ փառաբանելու համար զայն:

Այս խանդավառութիւնը տեսնուե-ցաւ նաեւ մեր երիտասարդ սերունդի

գրագետներուն մօտ, որոնք ինքնաշո-ժար փոքրացին դրկել յօդուածներ ու քերթութեան աշդ մեծ յոբելեանին առթիւ յոյս ընծայուելիք **Գեղունի**ի նոր քիշին: Բնականաբար **Գեղունի**ի ծառայը և նկարագիրը թոյլ չէր տա-ր մեզի տեղ շնորհել այդ ամէնուն, բայց յարմարագոյն առիթին մոտայի եկք հրատարակել զանոնք «Բագմավիպ»ի յաջորդ քիշերուն մէջ:

Անցնելով նկատել մեր ներկայ ի-րականութիւնը փայփայող յոյսերը գրական ու գեղարուեստական սապա-րեզներու վրայ, հարկ է ըսել (խօսելով միայն հայ Սփիւռքի մասին) թէ իր ձգնաժամային պայքարին մէջ չի դա-դրիր տալ զօրաւոր նշոյններ. կան դէմքեր, տաղանդաւոր մտքեր, որոնք՝ որքան ալ օժտուած կարողութեամբ, սակայն նիւթականին անապահովու-թեան պատճառաւ կը տոռայտին ի-րենց ստեղծագործական քափին մէջ: Լսուած անուններ են՝ Զարեան, Հա-մաստեղ, Օշական, Ծառուկեան, Ար-մէն Անոյ, Մ. Իշխան, Արսէն Երկար, Շ. Նարդունի, Նշան Պէլիկապետեան, Հ. Վ. Յովհաննէսեան, Վ. Սօփեան, Ն. Սարափեան, ու բոլորովին նորեր՝ որոնք իրենց արուեստին յատկա-նշական հատորներով դեռ չեն իջած սապարեզ: Այդ բոլորին վրայ կը զգացուի արեւմտեան գրականութիւ-նէրու ազդեցութիւնը, արուեստի տե-սակետով կարեւոր, բայց խորքի կող-մէն քերթի՝ նկատմամբ հայկական բնիկ հողի և բարքերու պատկերացումին և ներշնչումին: Վէպ, բանաստեղծու-

թիւն, քննադատութիւն երեք կարեւոր ձիւղեր, որոնց մէջ անցեալին ունե-ցանք կարկառուն անձնաւորութիւն-ներ, այսօր սակայն յայտնուած չեն նորեր պակասը լեցնելու Վարդանի մը, Դուրեանի մը, Թեքեանի մը, Զարդարեանի մը, Զօհրապի մը, Պա-րոնեանի մը, Օտեանի մը, Ահարո-նեանի մը, մանաւանդ Ալիշանի մը՝ որ մեր գրականութեան մէջ տիտանի մը հանգամանքովը կանգնած է ա-րուեստագետ սերունդի աչքերուն առ-ջէ: Համաստեղ կարծես կատարած է իր դերը ու դադրած իր նախկին կեն-սունակութենէն, Զարեան միայն կը մշակէ իր ինքնուրոյն ուժեղ շարքը արտադրութիւններուն, Օշական՝ որ կը փորձէ մեր Վոյքեքը ըլլալ մտնե-լով գրական ամէն սեւերու սահ-մանէն ներս, շատ անտոյգ ապագայ մը ունի. իր վեպերուն ու պատ-մուածքներուն մէջ խաբուսիկ գեղեց-կութիւն մը կը յայտնաբերէ իր դարձ-դարձիկ ու ոլորտապտոյտ արտայայ-տութեան եղանակով. բառերական գործերուն և բանաստեղծական փոր-ձերուն մէջ ընդհակառակն ցոյց կու տայ պակաս ստեղծագործութեան և գեղարուեստական ձաշակի, իսկ քննա-դատութեան մէջ, — սապարեզ մը ուր ձոխձեմ կ'աւապտակէ ներկայիս, — երեւան կը բերէ ամենամեծ քերու-թիւնը անկշաղատութեան, կողմնակ-ցութեան, խորապէս անճաւօրութեան գրուածքի մը ներքին գեղեցկութեան, տաղանդաւորի մը փոքրիկտոնութեամբ և սեւեռունով քանդելու, տապալելու արժեքներ և անոնց փոխան ներկայաց-

նեղու մեզի ուղիներ՝ որ խակապես գոշրկ են գրական գեղեցիկը արտադրելու կարողութենէն:

Այն ինչ որ Ա. Զօպանեան կատարած է երկար տարիներ հայկ. գրականութեան անդամականին մէջ ունեւնաւորելով, գտելով, իրական արժէքները մատնանշելով, քաջաշէրտելով ու առաջնորդելով, արդեօք պիտի ունենայ իր արժանաւոր յաջորդը՝ որ գիտակցօրէն, ձեռնհասօրէն շարունակէ իր դերը:

Մեզի, մեր ժողովուրդին համար կը պակսի տակաւին ողջ խորքով հարուստ, և արուեստի պահանջներով կատարեալ գրականութիւն մը: Մեր աշխարհիկ գրականութիւնը դեռ դարձեալ մը կեանք չունի, դեռ կարօտ է յեղաշրջումի ու կատարելագործումի շրջաններէն անցնելու: Մենք սովորութիւն ունինք դիւրաւ խանդավառուելու և գրագետի դասնակարգով զարգարելու ձախտը բոլոր անոնց՝ որոնք կտոր մը կոկիկ հայերէն կը գրեն, և կամ խաբուսիկ շարք մը կը

զարնեն կցկտոր, զիրար չընկող քանի մը էջերու: Հենք ընթերցեալ թէ գրական «գեղեցիկը» արտադրելու համար կարեւոր է ամեն քանի առաջ ունենալ լայն զարգացում, տաղանդ, փիլիսոփայական խորք, ձաշակ, համալսական գրագետ. առանց այդ յատկութիւններուն չէ կարելի արեղծել մնայուն գործեր և արժանալ գրագետի և հեղինակի անունը:

Յայտնի է թէ այսօր գեղարուեստի ամեն մարդի մէջ կայ ընդհանուր անկում մը բոլոր ժողովուրդներու քով: Լոր ընթերցումներ, Լոր գրականութիւններ կը տարտղնեն ու կը ցրտեն մտաւորականութեան ուժերը դէպի տալաւորապաշտ, գերիրապաշտ, գոյութեանապաշտ հոսանքներու անոյս անտառներ:

Այդ հոսանքներու ազդեցութիւնը տակաւ առ տակաւ մուտք կը գործէ անոնց մէջ, տակաւին դեռ կը դիմադրենք և կը յոռանք չորիւրապետուի:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

ԲԱՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՆԱԻԱՐԶԵՑԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ԳՐԻԶ

Հոգեկից Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեանին

Սեպտեմբեր 7, 8 և 9 օրերն է որ կը պանծացնէ Հայրապետը, անոնցմով փառաւորելով Աստուածամօր Ծննդեան յիշատակը: Որքան նուիրական էր այդ տօնախմբութիւնը ազգիս քով հին դարերուն, յատկապէս հեղինակիս օրով, նոյնքան, և առաւել եւս նուիրական է եւ սիրելի այդ օրը՝ Միթարեաններու: Նուիրական եւ խնկելի, ո՛չ միայն անոր համար՝ որ այն շնորհաբեր օրուան մէջ երկուքուկէս դար առաջ կը հաստատուէր Միթարայ Ուխտը եւ իր հուսկ հանդուրանն ու դադարը կը գտնէր փոքրիկ եւ ամայի կղզեկիս մէջ, այլ նաեւ անոր համար՝ որ այդ Տունը, զոր Ինքը, Երկնքի եւ երկրի հօր Դշխոյն հիմնեց, եւ զոր կը հաճի միշտ գեղափայլ պահել ու պաշտպանել, եւ կեանքի յարածուի ուղիներին ամենախոյզ վայրկեաններուն իսկ՝ մայրաքաղաք յանձանձել: «Քանզի մեծ իսկ է զօրութիւն, — ինչպէս կ'ըսէ Նարեկայ մշտամբմունջ տառակը Գրիգոր⁽¹⁾ — զհնացեալն՝ անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառութեան, քան յանդոյից ստեղծագործել»:

Եւ կա՞ր արդեօք մեծագոյն վտանգ մը ջուրերէ չըջապատուած մեր այդ ճնշին բոյնին համար՝ քան վերջին փոթորիկը, 1939–1945ի պատերազմը, որ իր կոհակներու ամէհի սաստկութեամբ կը սպառնար հարուածել այդ թեթեւ մակոյկը՝ եւ զայն իր անյատակ անդունդներուն մէջ ի

սպառ թաղել: Տխուր օրեր, ուր սեւ մահն ու աւեր իրենց դժիւմ թելերով յարատեւ մեր վիստուն վերեւ կը սաւառնէին անողոք, եւ որոնց դիշատիչ մագիլներէն, ու չորհրդ, Միթարայ Ուխտը բովանդակ, հեռաւորներովն ու նաւահանգստին մէջ բռնակ մերձաւորներով՝ ողջ եւ անվնաս կը մնար, այլոց եւս հանդիսանալով՝ յաւէտ վեհանձն՝ փրկարար:

Ուստի որդիական երախտապարտ զգացման արտայայտութիւն մը կ'ուզենք բարձրացնել ասով մեր երկնաւոր զթառատ Մօր եւ ամենայաղթ Պաշտպանին, որ քաղաքական ու հոգեկան ամենազոհաբեր պարագաներուն իսկ՝ մշտապատրաստ գտնուած է մեր Երանաշնորհ Հօր Միթարայ անլուրի ձայնին եւ անոր որդւոց պաղատանքին՝ փութացնելով իր օժանդակութիւնը: Որ ու վհտեւ ամենակործան պայքարի ահադին աղէտներէն պրծած այսպիսի Տիրուհոյ մը ասպարին ներքեւ, մեր անդորրաւէտ նաւահանգստին հաղիւ չէմքը կոխած՝ կը կրկնենք Իրեն Որդեգրութեան մեր անյեղլի դաշինքը, լիայոյս՝ թէ ինչպէս անցելոյն մէջ՝ նոյնպէս ապագային եւ մինչեւ յաւիտեան անպակաս պիտի ընէ Ամենասուրբ Կոյսն իր պաշտպանութիւնը մեզմէ, եւ պիտի հաճի փառաւորել իր «Պահպանիչ Որդեգրաց» տիտղոսով:

Բայց ներկայ պարագաներէս դուրս, մենք արդէն ուրիշ պատճառ ունէինք այս եւ ասոնց նման, Աստուածածնի ի պատիւ գրուած կամ մեր նախնեաց ձեռքով թարգ-

(1) Նարեկ, ԽԹ, Բ: